

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N5

Հաշվետվություն

Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի 2016-2017 ուս. տարվա

/գիտխորհրդի նիստ, 20 նոյեմբերի, 2017թ./

**Օրակարգ**

1. Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի դեկան Ս. Աբրահամյանի հաշվետվությունը՝ ֆակուլտետի 2016-2017 ուս. տարում կատարած աշխատանքների վերաբերյալ:

Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 32 անդամներից 29-ը: Նիստը նախագահող Ս. Գասպարյանը առաջարկեց դեկանի ելույթի համար հատկացնել 15 րոպե, իսկ մյուս ելույթների համար՝ 5-ական րոպե: Միաձայն քվեարկության արդյունքում հաստատվեց տվյալ ընթացակարգը:

1. ԼՍԵՑԻՆ՝

**Ս. Աբրահամյան՝** Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի դեկան, պ.գ.թ., դոց.

/հաշվետվությունը կցված է/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

**Ա. Սողոմոնյան՝** ուսխորհրդի նախագահ, մագիստրատուրայի երկրորդ կուրսի ուսանողուհի

Ցանկանում եմ շնորհակալություն հայտնել դեկանին ուսխորհրդին մշտապես սատարելու համար: Դեռևս չենք ունեցել մեկ հարց, որ դիմենք դեկանին և նա չփորձի ամեն ինչ անել մեր խնդիրը լուծելու համար: Նաև ցանկանում եմ շնորհակալություն հայտնել ֆակուլտետի բոլոր ամբիոնների վարիչներին, որոնք նույնպես միշտ պատրաստակամ են եղել մեզ օգնելու:

**Յու. Գաբրիելյան՝** Գերմանական բանասիրության ամբիոնի պրոֆեսոր, բ.գ.դ.

Ելույթում շատ համակողմանի ներկայացվեց հաշվետու ժամանակաշրջանում ֆակուլտետում կատարված աշխատանքները: Իրոք, շատ մեծ աշխատանք է կատարվել: Առաջարկում եմ այդ աշխատանքները գնահատել լավ:

**Մ. Ապրեսյան՝** Անգլերենի թիվ 1 ամբիոնի վարիչ, բ.գ.թ., պրոֆ.

Ինչպես նշեց իմ գործընկեր Յու. Գաբրիելյանը՝ դեկանը շատ լավ ներկայացրեց ամբիոնների կատարած աշխատանքը, դա հնարավոր է դառնում նաև մեր դեկանի լավ բնավորության և մշտապես մեզ աջակցելու շնորհիվ: Շնորհակալ եմ նաև համալսարանական ադմինիստրացիային մեր աշխատանքները գնահատելու համար: Մեր ձեռքբերումներից եմ համարում այն, որ մեր ամբիոնում առաջին անգամ իրականացավ պաշտպանություն՝ մյուս ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմի ընդգրկման և մեծ օգնության շնորհիվ: Գեզեցիկ ձևով ճանապարհեցինք մեր թոշակառուներին, շնորհակալություն համալսարանի ադմինիստրացիային այդ հարցում մեզ օգնելու համար:

**Հ. Բաղդասարյան՝** Ռոմանական բանասիրության ամբիոնի վարիչ, բ.գ.թ., դոց.

Միանալով իմ գործընկերներին՝ ավելացնեմ, որ հարգարժան դեկանը մշտապես մեզ սատարում է, աջակցում է ցանկացած հարցում: Մեր ամբիոնն ունի լուրջ խնդիր իտալերենի բաժնի հետ կապված: Դիմորդներ չունենք այդ բաժնում, բայց ուզում ենք ամեն ինչ անել այդ բաժնի պահպանման համար: Դրան կարծում ենք կնպաստեն ուսումնական ծրագրային փոփոխությունները, մասնավորապես՝ երկլեզու մասնագիտական ուսուցման անցնելը:

**Ե. Երզնկյան**՝ Անգլերենի թիվ 2 ամբիոնի վարիչ, Բ.Գ.Դ., պրոֆ.

Միանում եմ իմ գործընկերների գնահատականին, մենք բոլորս լավ ենք աշխատում, ներգրավվում նոր ծրագրերի մեջ, մասնակցում սեմինարների: Ուզում եմ անդրադառնալ մի մտահոգիչ հանգամանքի: Բակալավրիատում օտար լեզուների ժամաքանակը նվազել է, բայց դարձյալ ուզում եմ հարց բարձրացնել, որ գոնե բանասիրական ֆակուլտետներում ժամաքանակը ավելացվի: Երկու կիսամյակ օտար լեզուն շատ քիչ է: Ուզում եմ նաև ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ գիտաժողովներին մասնակցությունը մեզ մոտ շատ չի խրախուսվում, մինչդեռ սա շատ կարևոր եմ համարում:

**Ծ. Պարոնյան**՝ Միջմշակութային հաղորդակցության ամբիոնի վարիչ, Բ.Գ.Դ., պրոֆ.

Ֆակուլտետում իրոք շատ մեծ աշխատանք է կատարվում, բայց իհարկե ունենք նաև խնդիրներ, ինչպես ամենուր: Մենք տալիս ենք իրոք մրցունակ գիտելիք, կատարում ենք մի շարք փոփոխություններ մեր բուհի միջազգայնացման գործընթացին նպաստելու համար, նկատվում է արտասահմանցի ուսանողների աճ: Հայկական համատեքստում ուսանողների հաճախելիության հետ կապված խնդիրներ կան, բայց պատճառները օբյեկտիվ են, քանի որ ուսանողները նաև աշխատում են: Բոլոնիայի համալսարանի մեր իտալացի ուսանողն ասաց, որ քննության ժամանակ դասախոսն իրավունք ունի մեկ կամ երկու բալ ավելացնել ուսանողի գնահատականին դասերին մշտապես ներկա լինելու համար, բացի այդ՝ դասերին չհաճախած ուսանողը ավելի մեծ ծավալի նյութ պետք է պատրաստի: Ընդհանուր առմամբ մեր ուսանողը ավելի շատ պետք է ուշադրություն դարձնի գիտելիքի որակին, քան գնահատականին: Մեր ծրագրերը լիովին համապատասխանում են միջազգային որակի չափանիշներին, տարվում է ուսանողակենտրոն ուսուցում, որը նշանակում է, որ ուսանողը կարող է նաև առաջարկություններ անել տվյալ դասընթացի վերաբերյալ, և դասախոսը կկատարի համապատասխան փոփոխություններ և լրացումներ:

**Զ. Հարությունյան**՝ Ֆրանսիական բանասիրության ամբիոնի վարիչ, մ.գ.թ., դոց.

Դեկանը շատ լավ և մանրամասն ներկայացրեց Ֆակուլտետում կատարված աշխատանքներն ընդհանրապես և ամբիոններին՝ մասնավորապես: Ամբողջ ֆակուլտետն արդեն մոտ երկու ամիս է, ինչ ընդգրկված է նոր ծրագրերի կազմման գործընթացի մեջ, որը մրցակցային կդարձնի մեր ֆակուլտետը: Ֆակուլտետի մթնոլորտը ներդաշնակ է, աշխատանքային: Դեկանի աշխատանքը գնահատում եմ լավ:

**Ս. Գասպարյան**՝ անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ, Բ.Գ.Դ., պրոֆ.

Ելույթներից արդեն հասկացանք, որ մենք լավ ենք աշխատում, մեր դեկանի, մեր պրոֆեսորադասախոսական կազմի մեծ աջակցությամբ: Իհարկե, կան նաև խնդիրներ, որոնք էլ աշխատում ենք լուծել: Խոսելով բակալավրիատի նոր ծրագրերի մասին, ուզում եմ ասել, որ բանասիրությունից հրաժարվելն ինձ համար այնքան էլ հեշտ չէր, բայց գոհ եմ, որ կարողացանք հնարավորինս լավ նոր ծրագրեր ներկայացնել գործնական արդյունքներն առավել ապահովելու համար: Այդուհանդերձ, բանասիրական ուղղվածությունը չենք կարող անտեսել հետազոտական աշխատանքները կատարելիս, ուստի ես առաջարկել եմ դասական լեզուներին ավելի մեծ տեղ հատկացնել ատենախոսություններում՝ ուղղորդվելով դրանք դեպի դասական լեզուները: Այս հարցում մեզ կօգնի ընդհանուր լեզվաբանության ամբիոնը: Երկու եվրոպական լեզուների և մեկ դասական լեզվի իմացությամբ հետազոտողը մեզ համար շատ կարևոր մասնագետ կլինի: Միշտ ավելի լավի ակնկալիքով շարունակենք աշխատել:

**Ա. Գրիգորյան**՝ ԵՊՀ պրոռեկտոր

Նախ մեկ դիտարկում ունեմ դեկանի հաշվետվության ֆորմատի հետ կապված: Հաշվետվությունը չպետք է հիմնված լինի միայն ամբիոնական հաշվետվությունների վրա: Անդրադառնալով հնչեցված հարցերին, ուզում եմ ասել, որ համաձայն չեմ, որ ունենք արտասահմանցի ուսանողների աճ: Այլ երկրներից ուսանողներ բերելու առումով ֆակուլտետը դեռևս շատ բան ունի անելու: Կարևոր է նաև վճարովի ծառայություններ մատուցելու հնարավորությունների ընդլայնումը: Իջևանի մասնաճյուղում մենք արդեն կիրառում ենք երկլեզու մասնագիտական ուսուցումը, որը դրական արդյունքներ է տալիս, կարծում եմ իտալերենի հետ կապված խնդիրները դրանով կլուծվեն: Հաճախումների հետ կապված ասեմ, որ մոտեցումները կարող են մի փոքր տարբեր լինել նույն իտալական համալսարաններում, բայց ընդհանուր առմամբ նրանք ևս առաջնորդվում են նույն դրույթներով: Մենք առավել ազատականություն ենք տալիս դասախոսին քննության կամ վերջնարդյունքների ձևավորման ընթացքում ինչ-որ ձևով հաշվի առնել հաճախումները: Կարևոր եմ համարում վիրտուալ ուսուցման ներմուծումը, փորձեք դեսպանատների կամ այլ կառույցների օգնությամբ ձեռք բերել վիրտուալ լսարաններին անհրաժեշտ սարքավորումները: Ֆակուլտետի մթնոլորտը լավ է՝ դեկանի և ամբիոնների վարիչների շնորհիվ: Հետազոտական աշխատանքների վերաբերյալ քննարկումները դեռևս կշարունակենք ավելի փոքր ֆորմատով: Պետք է աշխատենք ընդունելության խնդիրները լուծելու ուղղությամբ, կարծում եմ բակալավրիատի երկլեզու մասնագիտական կրթությունը այս առումով կաշխատի: Ավելացնեմ, որ իրոք պարոն Աբրահամյանի հետ շատ հեշտ է աշխատել և համալսարանի ադմինիստրատուրան մեծ հաջողությամբ համագործակցում է նրա հետ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Միաձայն քվեարկության արդյունքում 2016-2017 ուս. տարվա ընթացքում Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի կատարած աշխատանքը գնահատել դրական:

Գիտխորհրդի նախագահ՝

Ս. Աբրահամյան

Գիտխորհրդի քարտուղար՝

Գ. Մուրադյան

20 նոյեմբերի, 2017 թ.